## Տեխնիկական չափանիշները

| | |
|---|---|
| Մետաղը և հարգը | արծաթ 925° |
| Տրամագիծը | 50,0 մմ |
| Քաշը | 33,6 գ |
| Որակը | պրուֆ |
| Ձևավորումը | մասամբ ոսկեզօծ |
| Եզրաշուրթը | ատամնավոր |
| Քանակը | 300 հատ |

## Technical specification

| | |
|---|---|
| Metal and alloy | silver 925° |
| Diameter | 50,0 mm |
| Weight | 33,6 g |
| Quality | proof |
| Decorative design | partially gilded |
| Edge | ribbed |
| Quantity | 300 pcs |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
CENTRAL BANK OF THE REPUBLIC OF ARMENIA







# ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ



# VISIT OF POPE FRANCIS TO ARMENIA

# ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է հուշամեդալ՝ նվիրված Նորին Սրբություն Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի Հայաստանի Հանրապետություն այցին (24-26 հունիսի, 2016 թ.), որի կարգախոսն է՝ «Այց առաջին քրիստոնյա երկիր»:

301 թ. Հայաստանում քրիստոնեությունը հռչակվել է պետական կրոն, ինչը կապված է Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան հետ: Սուրբ Գրիգոր Լուսավորիչը համաքրիստոնեական տոնելի սուրբ է, նրա մասունքները դարերի հոլովույթում սփռվել են ողջ քրիստոնյա աշխարհում:

Համաքրիստոնեական շրջանակներում կարևորելով եկեղեցիների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունների զորացումը՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2000 թ. այցելել է Հռոմի Կաթողիկե եկեղեցի և նրա գահակալ Հովհաննես Պողոս Բ Պապին, որն, իր հերթին, 2001 թ. իր մասնակցությունն է բերել քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարություններին:

Դիմերես՝ Խոր Վիրապի վանքը Արարատ լեռան ֆոնի վրա և Ֆրանցիսկոս Պապի այցի թվագրումը:

Դարձերես՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի արձանը Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարի արտաքին որմնախորշում (2005 թ., քանդակագործ՝ Խաչիկ Ղազանչյան), Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հռոմի Կաթողիկե Եկեղեցու զինանշանները:

Էսքիզների հեղինակ՝ Արամ Ուռուտյան:
Հատվել է Լիտվայի դրամահատարանում:




# VISIT OF POPE FRANCIS TO ARMENIA

The Central Bank of Armenia has issued the commemorative medal dedicated to the visit of His Holiness Pope Francis to the Republic of Armenia (24-26 June, 2016). The motto of the visit is: "Visit to the First Christian Nation".

Proclamation of Christianity as a state religion in Armenia in 301 AD is associated with the name of Saint Gregory the Illuminator who is a saint recognized by all traditional Christian Churches. For centuries his venerated relics were spread all over the Christian world.

Lending importance to strengthening of the existing brotherly relations between Christian Churches, in 2000 His Holiness Karekin II, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians paid a visit to the Roman Catholic Church and her leader, His Holiness Pope John Paul II,who, in his turn, in 2001 participated in celebrations dedicated to the 1700th anniversary of proclamation of Christianity as a state religion in Armenia.

Obverse: the Monastery of Khor Virap against the Mountain Ararat and the date of the visit of Pope Francis.

Reverse: the statue of Saint Gregory the Illuminator in the niche of Saint Peter's Basilica in Vatican (2005, sculptor - Khachik Ghazanchyan), the Coats of Arms of the Armenian Apostolic Church and the Roman Catholic Church.

Designed by Aram Urutyan.
Minted in the Lithuanian Mint.